№ 236 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 **1899** ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 № 236

ՔՍԱՆԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻԿԱՅ **1900** ԹՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարյատինսկայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնօգնութեան անհրաժեշտութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Պետական հսկողութիւն չերամի սերմի վրա. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Տրանսվաալեան պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Բագուի դրամական տագնապի շուրջը.

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» մէջ հաղորդած տեղեկութիւններից մեր ընթերցողները գիտեն, որ ներկայ դեկտեմբեր ամսի սկզբից աշնանային եղանակը յանկարծ փոխվեց ձմեռային խիստ եղանակի։ Ամբողջ Անդրկովկասը ենթարկվեց մի շարք փոթորիկների և մրրիկների։ Ձիւնը փչացրել է ճանապարհները, ծածկել է դաշտերը և անապատները, որտեղ հազարաւոր կենդանիներ օգտվում էին ձմեռային արօտներից։ Քաղաքներում, ցուրտ եղանակի պատճառով, ազգաբնակութեան չքաւոր դասակարգը ընկել է անելանելի դրութեան մէջ։ Վառելիքի պակասութիւնը և կենսական անհրաժեշտ մթերքների թանգութիւնը առաջ են բերել մի այնպիսի կարօտութիւն, որի մասին անհրաժեշտ է անյապաղ հոգատարութիւն բարեգործական և վարչական հիմնարկութիւնների ու մասնաւոր անձերի կողմից։

Ահա մի դէպք, որտեղ մեր բարեգործական ընկերութիւնները կարող էին օգտաւէտ և նպատակայարմար գործ կատարել, կազմակերպելով լայն կերպով չքաւորներին օգնելու գործը։ Եթէ մեր ընկերութիւնները պէտք է սպասեն, որ գտնվեն բարեգործներ և ինքնաբերաբար գումարներ ուղարկեն նրանց՝ չքաւորներին օգնելու համար, նրանք ստիպված կը լինեն շատ և անվերջ սպասել։ Րօպէն պահանջում է եռանդուն և անձնուէր գործունէութիւն։

Այսօրվայ մեր լուրերից ընթերցողը կը տեղեկանայ, որ տեղական իշխանութեան բարձր ներկայացուցիչը իր կողմից արել է կարգադրութիւն թեթեւացնելու կարօտեալների դրութիւնը և բաց է թողել հազար րուբլի գումար այդ նպատակով։ Մասնաւոր մարդկանց և զանազան հիմնարկութիւնների արած օժանդակութիւնները ուղղվելով նոյն շաւղով, կարող են արդարև մի յայտնի չափով թեթեւացնել կարօտեալների վիճակը։ Ժողովարարութիւնը, բարեգործական ներկայացուցիչներից գոյացած նպաստները կարող են կազմել մի փոքր ի շատէ բաւարար գումար այդ նպատակի համար։

Բարեգործական ընկերութիւնների և հասարակական ինքնօգնութեան ոյժը փորձվում է աղէտների և դժուար օրերի ժամանակ։ Ցաւալի կը լինի, եթէ մեր հասարակութիւնը անկարող կը լինի ներկայ րօպէում օգնութիւն հասցնել իր կարօտեալներին, և թոյլ կը տայ, որ ձմեռվայ մշտական զրկանքներին աւելանան բացառիկ տարվայ պատճառած նոր աղէտները։ Առհասարակ աղքատներին խնամելու գործը դեռ եւս կանոնաւոր կազմակերպութիւն չէ ստացել և չը կան ոչ թաղական և ոչ այնպիսի բարեգործական հաստատութիւններ, որոնք հոգ տանէին ազգաբնակութեան զանազան մասերի վրա։ Այդ հերթական հարցը, որ պէտք է գործնական կերպով դրվէր հրապարակի վրա և մշակվէր, դեռ չէ հասունացել մեր հասարակութեան համար։ Իսկ աղէտները, որ սկսել են կրկնվել բաւական յաճախ, դիզում են ընթացիկ կարօտութեան վրա այնպիսի բարդութիւններ, որոնցով աւելի եւս վատթարանում է եղած ծանր դրութիւնը։ Հասարակութիւնը պէտք է գիտենայ ինքն իրան օգնել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Բարձրագոյն ուսում ստացող երիտասարդութեան կեանքը զանազան երկիրներում զանազան գոյներ ունի. կարելի է ասել, որ իւրաքանչիւր ազգ իր բնաւորութիւնը, իր կուլտուրական առանձնութիւնները հանդէս է հանում իր բարձրագոյն դպրոցների մէջ։ Չը կայ երկիր, ուր ուսանողութիւնը հասարակութեան պարծանքը չը կազմէ, ուր բարձրագոյն ուսումը փրկարար լոյս չը համարվի։ Այդ բոլոր պատճառներով ուսանողութեան կեանքը, ուր էլ լինի, մի առանձին հետաքրքրութիւն է պատճառում։

Հետաքրքրական է թէ ինչպէս է վերաբերվում պարիզցի ուսանողը օտարերկրացի ուսանողին։

Օտար երկրացիներից, մանաւանդ ռուսներից—պարիզցիները քիչ հեռու են պահում իրանց, և յաճախ մեղաւորը վերջիններս են. մերոնք (ռուսները) սիրում են խումբ-խումբ ապրել, առանձին, և եռանդով գործ են ածում իրանց մայրենի լեզուն։ Ֆրանսիացուն դա դիպչում է, նա հեռանում է և յետոյ—անկեղծութեան րօպէին—նա կը նկատէ ձեզ. «Ինչու դուք միշտ ռուսերէն էք խօսում»։

Կայ ապրուստի միջոցների և սովորութիւնների տարբերութիւն էլ։ Մեզ մօտ շատ չքաւորներն են, որոնք կարելի են համարում գրօշներ ստանալով բարձրագոյն ուսման դիմել։

Գալով Պարիզ, ռուսը սովորաբար երկու-երեք ընկեր է գտնում. միասին բնակարան են վարձում, այնպէս որ իւրաքանչիւր մարդուն ամսական 6 րուբլի է նստում։ Հարկաւոր կահ-կարասիքը—մահճակալ, սեղան և աթոռ—ձեռք է բերվում հնոտիներ ծախողից. կերակուր ստանում են մի որ և է ռուսական ճաշարանից, ուր 1 ֆրանկով (37 կոպէկ) տալիս են ոչ փայլուն կամ կշտացնող ճաշ։ Մի քանիսները աւելի լաւ են համարում ձեռք բերել երկաթէ վառարան, իրանց ձեռքով տապակում են ձուն միս (լաւ տեսակը արժէ մօտ 32 կոպէկ ֆունտը), որովհետև տաւարի միսը մօտ 20 կոպէկ թանգ է նստում։ Ընդ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱԳՈՒԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՇՈՒՐՋԸ

Մեր չարագուշակ նախագուշակութիւնն իրագործվեց. տեղիս առեւտրական աշխարհում նախատեսնվող «տրաքը» տեղի ունեցաւ։ Դադար առան զանազան նոր ձեռնարկութիւններ, անիրագործելի մնացին շատ ծրագրեր, անգործունէութեան մատնվեցան տեսակ-տեսակ արհեստանոցներ և գործարաններ. կրճատվեցին մինչև այժմ նոյն իսկ ուշադրութեան չառնված ծախսեր, առժամանակ փակվեցին ընդարձակ գործունէութիւններ, սակայն, այնու ամենայնիւ, սպառնալի վտանգը մնաց անխուսափելի… Գործ դրած ամեն տեսակ թէ ներելի և թէ աններելի միջոցները ի դերև ելան. հնարաւորութեան չափն այլ ևս անցաւ։ Հետզհետէ երեւան եկան մի շարք սնանկութիւններ…

Սնանկութեան այդ դէպքերը մի ուրիշ ժամանակ, թերևս, մատով ցոյց տալու պատուի արժանանային, բայց այստեղ անցան աննկատելի կերպով, որովհետև վաղուց, շատ վաղուց, այդ անխուսափելի էր համարվում. և ոչ միայն մի քանի սկսնակ առեւտրականների, նոր նաւթարդիւնագործ անուն կրողների, այլ և նոյն իսկ յայտնի ֆիրմաների վերաբերմամբ։ Կրած ընդհանուր ձախորդութիւնները, դրամական տագնապը օրէցօր աւելի և աւելի զգալի և շօշափելի էին դառնում։ Հէնց այս պատճառով էլ մենք ամենքս այն աստիճան ընտելացել էինք այդ դրութեան, որ երբ առաջին սնանկութեան դէպքը տեղի ունեցաւ, աննկատելի կերպով, համարեա սովորական դէպքերի կարգն անցաւ։ Եւ սնանկութեան արհաւիրքի առաջին ծաղիկ դարձած յայտնի հրէայ առեւտրականը նոյն օրը, երբ անվճար մնացած մուրհակը բողոքի էր ենթարկվել, հասարակաց ժողովարանում նստած՝ թուղթ էր խաղում և սիրալիր ու «անմեղ» ժպիտներ արձակում…

Այդ վարմունքը՝ թէև ինքն ըստ ինքեան օտարոտի էր թւում, բայց չէր պախարակվում, որովհետև սնանկութեան պատճառը վերագրվում էր գործերի անյաջող ընթացքին և ոչ ուրիշ հանգամանքների։ Սկսել է մի շարք ձեռնարկութիւններ, թանգ գնով գնել է—դիցուք—նաւթաւէտ հողեր, նաւթահանքեր, կապալով է վերցրել գործարաններ, արհեստանոցներ, և այլն և այլն. այդ բոլորն ունեն իրանց արժէքը, այդ բոլորի վրա, ճիշդ հաշիւներով, գրաւոր ապացոյցներով որոշ ծախսեր են արված, բայց դեռ չեն հասցրված այն դրութեան, որ կարելի լինի արդիւնք ստանալ. անպայման էլի ծախսեր պէտք է անել, պէտք է գործը շարունակել, որպէս զի կարելի լինի, թէկուզ մօտիկ ապագայում, օգուտ, արդիւնք ստանալ. բայց այդ անկարելի է դառնում, որովհետև փող չը կայ։ Փող չը կայ ընթացիկ գործերը վարելու համար, փող չը կայ տուած մուրհակները ժամանակին թափելու համար։ Բոլոր ձեռք բերածը արդէն գործի մէջ է մտցրել. ինչ անել։ Մնում է հաշտուել իրերի դրութեան հետ. կանչել բոլոր պարտատէրերին, նկարագրել, պատմել, բացատրել գործերի դրութիւնը և ապա նրանց հայեցողութեան թողնել «լինել, չը լինելու» վճիռը։ Այդպէս էլ վարվում է սնանկութեան վտանգին մատնված ամեն մի առեւտրական, որը կեղծումներից ազատ է, յետին մտքերով չէ առաջնորդված, ուրիշ խօսքով—առակով չէ արած» և կեղծ սնանկ հրատարակած—ինչպէս սովորաբար արվել է և յաճախ էլ կրկնվում է ներկայումս։

Այս եղանակն այնքան սովորական է դարձած, որ երբ մէկն ու մէկի գործերն աջող չեն ընթանում, իսկոյն սրախօսութիւններ են տեղի ունենում. «այս ինչն էլ, ինչպէս ասում են, պատրաստվում է պարտատէրերին մի թաս սուրճի հրաւիրելու»… Պէտք է խոստովանած, որ այսպիսով թէ պարտապանը և թէ պարտատէրերը յաճախ համաձայնութիւն են կայացնում, մուրհակները վերանորոգում, նոր ժամանակամիջոց որոշում, երբ տեղեկանալով, տեսնում են, որ ձեռնարկած գործերը վատ չեն, գոյքը—ակտիվը յաճախ այնքան դէպս աւելի արժէ, քան պարտքը. մնում է ուրեմն միջոց, հնարաւորութիւն տալ, որպէս զի գործը շարունակվի և ցանկալի հետեւանքին հասցնվի։

Ո՞վ է այդ չարաբաստիկ դրութեան ստեղծագործողը, ինքը՝ գործերի ձեռնարկո՞ղը, թէ ուրիշ հանգամանք։ Ինչու ինքը, ձեռնարկողը նախապէս չէ հոգացել միջոցների մասին, ինչու չէ հաշուել, չէ կշռադատել և իր կարողութեան, նիւթական միջոցների համապատասխան գործ չէ ձեռնարկել, որպէս զի կարողանայ առանց դժուարութեան, ապահով կերպով գործը շարունակել, հետեւանքի հասցնել։ Պատճառը պէտք է որոնել Բագուի մօտիկ, շատ մօտիկ անցեալում։ Իսկապէս դա մի ախտ է, որ ստեղծել է այդ անցեալը։ Անցեալում ինչեր ասես տեղի չեն ունեցել։ Առանց կապիտալի աջողվում էր գործեր ձեռնարկել և փող վաստակել։ Այս մասին ժամանակին մանրամասնօրէն գրել եմ։ Այդպիսի մի քանի աջողութիւններ հիմք դարձան թղթախաղի յատուկ օրէնքով աւելի և աւելի ընդարձակ գործեր ձեռնարկել, աւելի մեծ ռիսկ ստանձնել և—խօսելով տեղական լեզուով—լաւ խփել… Սկսված գործերի մեծագոյն մասը այդ շաւղով է ընթացել. 1000 րուբլի ունեցողը 5000 րուբլու գործ է սկսել, 100 հազար ունեցողը՝ միլլիօնի գործ և այլն։ Այդ յափշտակութիւնը, ինչպէս մասամբ պարզվեց, հիմնված էր շինծու առեւտրի վրա, որ յօրինել էր տեղիս բօրսայի և նրա շուրջը վխտացող միջնորդների լեգէօնը…

Մի ժամանակ մենք ամենքս այն աստիճան ինքնամոռացութեան էինք մատնված, այն աստիճան յափշտակված գայթակղեցուցիչ յորդորներով, որ առանց հաշիւ տալու, առանց ապագայ վճարների մասին մտածելու, ձգտում էինք ամեն մի նոր ձեռնարկվող ընկերութիւնների մէջ մաս ունենալ, բաժիններ ձեռք բերել, գործակից լինել, մի խօսքով շատ գործերի մասնակից լինել, որ շատ օգուտ ունենանք, մեծ շահ ստանանք… Սկզբնական ծախսերի, վճարների համար փող հեշտութեամբ գտնվում էր։ Մուրհակ տալ, մուրհակ ստանալը սովորական բան էր դարձել։ Նոյն իսկ բանկերը ոչ միայն հեշտութեամբ կրեդիտ էին բաց անում, այլ և առանց խտրութեան զեղչում էին ամեն մի ներկայացրած մուրհակ. բաւական էր, որ մուրհակ ներկայացնողը վարկ ունէր, վստահելի էր։ Այս աջակցութիւնը թէ մասնաւոր առեւտրականների և թէ բանկերի կողմից հանդիսացաւ իբրև շօշափելի խրախուսանք։ Ինքն ըստ ինքեան օգուտը ակնյայտ էր և շօշափելի։ 6—8%-ով մուրհակներ էին զեղչում, ասել է թէ 6—8% տալիս էին փող վերցնում, այդ փողը գործի մէջ մտցնում և 50—60% աշխատում, այն էլ շաբաթների, ամիսների ընթացքում։ Այդ գայթակղեցուցիչ օրինակները վարակիչ կերպարանք ստացան։ Ամեն մի դրամէտ, անդրամէտ սկսեց մուրհակներ տալ, մուրհակների վրա բլանկներ դնել։ Աջ և ձախ մուրհակներ էին, որ տրվում էին։ Մարկոսը մուրհակ էր տալիս Կիրակոսին, իբր թէ նրան պարտ է, դիցուք, 3000 րուբլի, Կիրակոսը բլանկ էր դնում նոյն մուրհակի վրա, հանրապէս ամիսը 35 ռուբլուց պակասով (չը հաշւելով ուսումը) մի մարդ, որ օրը երկու անգամ ուտում է (նկատեցէք, որ ուտել դեռ չէ նշանակում ճաշել), չէ կարող ապրել: Ամեն ինչ կախված է պահանջից, և կան այնպիսինները, որոնք ամսական 18 ռուբլով են ապրում: Եւ եթէ յիշէք, որ կերօսինի լիտրը արժէ 20 կոպէկ, իսկ շաքարի ֆունտը 22 կոպէկ, մի քիչ դժուար կը լինի երեւակայել թէ ինչ են ուտում այդ մարդիկ: Ֆրանսիացի ուսանողը այսպիսի կարիքների հետ ծանօթ չէ և միասին ապրելուն ու իր ձեռքով ճաշ պատրաստելուն նայում է ինչպէս մի նախնական և միամիտ բանի:

Պատճառը, ի հարկէ, այն է, որ ֆրանսիացի ուսանողի հայրը գիտէ, որ ուսում ստացող երիտասարդը, եթէ ոչ բանուորի չափ, գոնէ նրանից մի քանի աստիճան լաւ ապրելու իրաւունք ունի, մինչդեռ մեզ մօտ հայրը ուզում է, որ ուսանող որդուց էլ աշխատանք վերցնի, կրճատելով նրա համար նշանակած բիւջէն այնքան, որ նա սովից չը մեռնէ: Նմանապէս, պէտք է ենթադրել, ֆրանսիացի բարերարը գրօշներ չէ նետում իր օգնութեան դիմող երիտասարդներին և բացի դրանից, բաւական բարեխղճութիւն ունի իր տուած խօսքը ազնուութեամբ կատարելու. մինչդեռ մեզ մօտ մի փողի տոպրակ ամենաշատը ամսական 20—30 ռուբլու բարերարութիւն անելու տրամադրութիւնն ունի և համոզված է, որ բարերարվածը շատ լաւ կապրէ այդ գումարով, այնքան լաւ, որ նոյն իսկ նախանձելի ձրիակեր էլ կարող է համարվել: Դեռ լաւ է, եթէ մեր փողի տոպրակները գոնէ հաստատ մնան իրանց խոստմանը և այդքան «առատ (!) կեր ու խումի» աղբիւրները մատակարարեն գոնէ մինչև ուսումը վերջացնելը…

*

Մեր հասարակական գործիչները երբեմն այնպիսի խայտառակ հերոսութիւնների են հասնում, որ ստիպված ես լինում վերին աստիճանի յուսահատական եզրակացութիւններ անել, նոյն իսկ մտածել, որ անհատական երևոյթները դեռ ընդհանուր ապականութեան նշաններ չեն: Նոյեմբերի վերջում, ինչպէս հաղորդում է «Одесск. Новости» լրագիրը, Ռոստովի նահանգական դատարանը քննում էր 26 տարեկան աղջիկ Աննա Այնաջեվայի գործը, որ աղմուկ էր հանել: Այս աղջիկը փորձել էր սպանել Նոր-Նախիջևանի նախկին քաղաքագլուխ Բալաբանովին: Յանցանքի առիթները պարզվելով դատարանի առաջ, Այնաջեվա ասաց, որ Նախիջևանի քաղաքագլուխը ամբողջ երեք տարի հետամուտ էր լինում իրան գցելի նպատակներով: 1897 թւի սկզբին նա գտնում է փողոցում մի ինչ-որ կալուածագիր և տանում է քաղաքային վարչութիւնը: Բալաբանով հանդիպում է նրան փողոցում մի քանի ժամանակ յետոյ և ասում է թէ այդ գիւտի համար նա, աղջիկը, պիտի պարգև ստանայ և ասում է, որ երեկոյեան ժամէ քաղաքային վարչութիւնը: Այդտեղ Բալաբանով փակում է նրան սենեակում և բռնաբարում:

Այստեղ մեղադրվողի խօսքերը ընդհատվում են հեկեկանքներից: Մի քիչ հանգստանալով, նա շարունակում է: Ուպրավայում, բացի ծառայ կնոջից, որ ներքին յարկումն էր ապրում, ոչ ոք չը կար և երբ նա սկսեց արտասվել և յայտնել թէ կը գանգատվի, Բալաբանով սպառնաց թէ «դեղին տոմսակ» կը տայ նրան և այնքան վախեցրեց, որ նա—մի անփորձ, խեղճ կար անող կին—վախեց գանգատ տալ մի այնպիսի ուժեղ և ազդեցիկ մարդու դէմ, ինչպիսին է Բալաբանովը: Մի քանի ամիս յետոյ, նա, իր ծանօթների խորհրդով, գանգատ տուեց Բալաբանովի դէմ. նրան ծանօթներն ասել էին, որ յանցանքների համար պատասխանատու են նոյն իսկ և քաղաքագլուխները: Նրա դրութիւնը այդ ժամանակ սարսափելի էր. քաղաքում ամենքը գիտէին նրա խայտառակութեան մասին, նրան ծաղրում էին, նրան մատով ցոյց էին տալիս, բամբասում էին: Մի և նոյն ժամանակ նրան առաջարկում էին փողով հաշտվել Բալաբանովի հետ, բայց նա չը համաձայնվեց: Դեկտեմբերի սկզբին նա իմացաւ, որ իր գանգատը Բալաբանովի դէմ դատարանը անհետեւանք է թողել: Ի՞նչ էր մնում անել: Յուսահատված, խայտառակված, նա վճռեց թունաւորվել, բայց թողեց այդ միտքը: Սակայն կամենալով իր ցեխոտած պատւի վրէժը հանել, նա գնեց Ռոստովում մի լիքը ռեվօլվեր և, հանդիպելով փողոցում Բալաբանովին, արձակեց ռեվօլվերը ոչ թէ սպանելու նպատակով, այլ խայտառակելու նպատակով:

Բալաբանով բացատրեց, որ այդ աղջիկը մի գործիք է իր թշնամիների ձեռքում. կամեցել են այդ թշնամիները, որ ինքը նորից քաղաքագլուխ չընտրվի ու դուրս են բերել այդ աղջըկան: Սակայն երդուեալները 5 րօպէից էլ քիչ տևած խորհրդակցութիւնից յետոյ արդարացրին մեղադրվող Այնաջեվային: Մի լաւ դաս, որ ստացաւ ոչ միայն պ. Բալաբանովի պէս քաղաքագլուխը, այլ և ամեն մարդ, որ կարծում է թէ կարելի է անպաշտպան մարդու վրա բռնութիւն գործ դնել և անպատիժ մնալ շնորհիւ հարստութեան և հասարակական դիրքի…

ՊԵՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԻ ՎՐԱ

—

Դեկտեմբերի 7-ին և 14-ին, Կայսերական Այգեգործական ընկերութեան ճիւղի հրաւէրով, կայացաւ երկու նիստ, որին մասնակցում էին տեղական և Թիւրքիայից եկած սերմ պատրաստողները: Նախագահը բանալով նիստը, յայտնեց, որ երկրագործութեան պ. մինիստրը ցանկութիւն է յայտնել հսկողութիւն (контроль) նշանակել շերամի սերմի վրա, որպէս զի Կովկասի ազգաբնակութիւնը ապահով լինի հիւանդոտ սերմերից և միջոց տայ տեղական սերմ հանողներին ընդարձակել իրանց գործը: Մինիստրութիւնը առաջարկել է զանազան հիմնարկութիւններին յայտնել իրանց կարծիքները: Ժողովը, խորհրդածութիւնից յետոյ, ձայների մեծամասնութեամբ որոշեց հետևեալները.

1) Հսկողութիւն հարկաւոր է թէ տեղական և թէ արտասահմանեան սերմերի վրա: 2) Սերմը կը բաժանվի երկու տեսակի. ցէլիւլեար և արդիւնագործական: Ցէլիւլեար կոչվում է այն սերմը, որը պատրաստված է հետևեալ կերպով. իւրաքանչիւր զոյգ թիթեռ գցում են մի փոքրիկ քիսակի մէջ և չորանալուց յետոյ՝ իւրաքանչիւր քիսակի զոյգ թիթեռները քննվում են: Իսկ արդիւնագործական կոչվում է այն դէպքում, երբ չեն քննվում բոլոր թիթեռները, այլ բօժօժից վերցնում են մի քանի հարիւր և քննում. եթէ հարիւրին 1—10 տոկոս առողջ է լինում, այն ժամանակ բոլոր թիթեռները դնում են մեծ-մեծ կտաւների (թթի չոր) վրա, որ սերմ ածեն: Թիւրքիայից բերված սերմերի մեծ մասը այդ եղանակով է պատրաստված: 3) Արտասահմանից բերված սերմերը մաքսատներից կուղարկվեն կայարանը քննելու համար. եթէ ցէլիւլեար է, կը կպցնվի սպիտակ բանդերօլ վրան տեղական լեզուներով գրված «ցէլիւլեար». իսկ արդիւնագործականի վրա կը կպցնվի մի ուրիշ գոյնի բանդերօլ: Հիւանդ սերմերը յետ կուղարկվեն մաքսատների միջոցով սերմատէրերին: 4) Քննելու ծախսերը ծածկելու համար կը վերցնվի իւրաքանչիւր սերմի մսխալից 5 կոպէկ արդիւնագործական սերմից, իսկ 2 կոպէկ ցէլիւլեար սերմից: 5) Տեղական սերմերից կը վերցնվի մսխալից 1 կոպէկ: 6) Տեղական սերմերը քննելու համար կուղարկվի կայարանից մի մասնագէտ, որը վերցնելով փորձի համար նմուշներ, կուղարկի նրանց կայարանը քննելու: Հիւանդ սերմերը կոչնչացնվեն: 7) Տեղական սերմ հանողները պէտք է քննութեամբ ձեռք բերեն վկայական, որ գիտեն շերամ պահելը և սերմ քննելը: 8) Կայարանին կից լինել մի մեծ սենեակ, բերված սերմերը պահելու համար: 9) Կայարանի ճիւղերում և Անդրկասպեան երկրի կայարաններում այլ ևս սերմ չը քննվի: 10) Շերամապահութիւնը Ագուլիսում զարգացնելու համար բանալ կայարանի ճիւղ: 11) Մինիստրութիւնից խնդրել, որ մելիօրատիվ վարկից 4$^0/_0$ փող բաց թողնվի տեղական սերմ պատրաստողների համար: 12) Խնդրել մինիստրութիւնից, որ մինչև միւս տարի արդէն օրէնք հրատարակվի հսկողութեան վերաբերեալ:

Ա. Թաղէոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցին, «Кавказъ» լրագրի ասելով, ուշադրութիւն դարձրեց այն հանգամանքի վրա, որ շարունակվող ցուրտը և ձիւնի տարափները, որոնք ծածկեցին Թիֆլիսի շուրջ գտնվող ճանապարհները, առաջ բերին կենսական անհրաժեշտ մթերքների չափազանց թանգութիւն: Այդ պատճառով Թիֆլիսի ազգաբնակութեան աղքատ դասակարգը մեծ կարիք ունի մանաւանդ վառելիքի: Ցանկանալով ազգաբնակութեան այդ մասին օգնութիւն հասցնել, իշխան կառավարչապետը հրամայեց դնել Թիֆլիսի նահանգապետի տրամադրութեան տակ 1000 ռուբլու մի գումար, որպէս զի աղքատներին օգնութիւն տրվի կամ փողով, կամ իրերով: Այդ գումարը արդէն յանձնված է և այսօրվանից սկսված պէտք է սկսվի օժանդակութեան գործադրութիւնը:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ամսիս 18-ին Պետական խորհրդում կը քննվի՝ Բաթումի և Կարսի նահանգների հողային կալուածական հարցը:

—

«Каспій» լրագիրը լսել է, որ նաւթարդիւնագործներից մի քանիսը, որոնք Բիբի-Էյբաթում հողեր էին վերցրել կապալով շահագործելու համար, խնդիրք են ներկայացրել պատշաճաւոր մինիստրութեան, որով հրաժարվում են այդ հողաբաժիններից, որովհետև առաջարկած գները չափազանց թանգ են և անձեռնտու:

—

Մտադրութիւն կայ Դաղստանի շրջանում վերացնել նաիբների պաշտօնը և նրանց փոխարէն նշանակել ոստիկաններ:

—

Թիֆլիսի յայտնի դրամատէր Ա. Մանթաշեան ցանկանալով իր կողմից օժանդակել Թիֆլիսի ազգաբնակութեան չքաւոր դասակարգին, նաւթի չափազանց թանգանալու պատճառով, նուիրել է հինգ ցիստերն (3500 պուդ) նաւթ քաղաքային վարչութեան, որպէս զի վերջինս էժան գնով ծախէ քաղաքիս չքաւոր ազգաբնակութեանը և գոյացած փողով փայտ առնէ դարձեալ չքաւորներին բաժանելու համար:

—

«Казбекъ» լրագրի խմբագրութիւնը յայտնում է, որ իրանից անկախ պատճառներով, ժամանակաւորապէս ստիպված է հրաժարվել լրագրի համարները բաց թողնել տօն օրերից յետոյ:

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր, ուրբաթ, դեկտեմբերի 17-ին, տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հերթական նիստը, որի պարապմունքներն են. 1) Ընթացիկ գործեր, 2) Շերամի սերմի վրա հսկողութիւն նշանակելու ծրագրի քննութիւնը և 3) Ի. Ալիբեգովի զեկուցումը այդ ծրագրի մասին: Կարող են մասնակցել նիստին և կողմնակի անձինք:

—

Մեզ հաղորդում են, որ Նաթախտարի կոչված տեղում, որտեղից Թիֆլիս քաղաքը մտադիր է ջուր բերել, տալիս է խառն ջուր, որի մէջ աղբիւրի մաքուր ջրի հետ կան և ուրիշ

գեղջում, փողը ստանում: Իսկ դրա դիմաց ինքը՝ Կիրակոսը առանձին մուրհակ էր տալիս Մարկոսին, թէ պարտ է նոյնպէս 3000 ռուբլի: Վերջինս էլ Կիրակոսի պէս բլանկ էր դնում այդ մուրհակի վրա և զեղջում, փողը ստանում: Մէջտեղ երկուսն էլ առձեռն կոպէկ չունէին, իսկ այժմ մէկ մէկու մուրհակներ տալով և մէկ մէկու համար երաշխաւոր հանդիսանալով՝ ձեռք բերին 6000 ռ. կանխիկ դրամ: Այդպէս էլ երկրորդի, երրորդի, չորրորդի, հինգերորդի հետ և այլն: Մուրհակների այս կերպ օպերացիան այն աստիճան ընդարձակ ծաւալ, բարդ կերպարանք ստացաւ, որ տեղիք տուեց զեղծումների և կեղծիքների: Ոչ միայն 5—10 հազար կարողութիւն ունեցողը ճարպիկութիւնով կարողացաւ մուրհակներով 50—100 հազարների տէր դառնալ, այլ և հասարակ ծառաներին անգամ մուրհակների տակ ստորագրել տուին և ուրիշ տեղի վաճառականի հաշւով փողեր կորզեցին բանկերից… Հետևանք: Հետևանքն եղաւ այն, որ կեղծիքները երևան եկան, հանդէս բերելով մի շարք խայտառակութիւններ՝ բանտարկութիւն, ինքնասպանութիւն և անուանարկութիւններ… Բայց այդ չէ բոլորը:

Երբ տեղի է ունենում սնանկութիւն, որից ակնյայտնի կերպով երևում է, որ այդ հետևանք չէ իրերի սովորական ընթացքի, այլ շինծու է, կեղծ, վաղուց մտածված, այդ՝ ի հարկէ, ոչ միայն վնասում է պարտատէրերին, այլ և ներշնչում է ընդհանուր երկիւղ, անվստահութիւն, կասկած դէպի ամեն մի պարտապան, ամեն մի ընկերութիւն, ամեն մի մարդ: Հաւատը վերանում է—ընկերը ընկերոջ, եղբայրը եղբօր այլ ևս չէ հաւատում, չէ աջակցում: Ով որ փող ունի, ում ձեռքը փող է ընկնում, այլ ևս բաժանվել այդ փողից չէ ցանկանում. ունեցողն էլ է ասում թէ փող չը կայ, չունեցողն էլ: Եւ այդ համարվում է խելացիութիւն, հեռատեսութիւն: Նոյն իսկ յայտնի կօմերսանտներ, միլիօնատէրեր բարեկամաբար այդ խորհուրդն են ներշնչում աջ ու ձախ… այդ է ներկայացնում մեզանում շուկայի ներկայ դրութիւնը: Այլ ևս ոչ մուրհակներ են զեղջում, ոչ տուած մուրհակներն են վերանորոգում. ժամանակը հասաւ, պահանջում են՝ թէկուզ ինչ լինում է, լինի:

Այժմ տեղիս բանկերը ծանրաբեռնված են միլիօնների մուրհակներով: Ոչ ոք մասնաւոր մուրհակներ այլ ևս չէ պահում իր մօտ. եթէ հնար ունի, զեղջում է բանկերում, իսկ եթէ ոչ՝ կօմիսիայով է տալիս բանկերին, որ ժամանակին անպատճառ հաւաքվի: Այս դրութիւնից մարդիկ այնքան են նեղված, որ պատրաստ են ոչ միայն 15—20$^0/_0$-ով փող վերցնել, այլ և իրանց ունեցածը կիսագներով վաճառել, միայն թէ հանգիստ լինեն, կարողանան ձեռնարկած անպայման օգտաւէտ գործը շարունակել, մուրհակները ժամանակին ազատել: Մի ուրիշ ասպարէզում, առևտրականների ոխակալ, մէկ մէկու դժբաղդութեան ծարաւի աշխարհից դուրս—թերևս նեղ ընկած մարդը օգնութիւն, աջակցութիւն գտնէր, բայց այստեղ այժմ ոչ միայն աջակցութիւն, կարեկցութիւն կարելի է սպասել, այլ նենգ ժպիտ, չարախնդութիւն միայն… որովհետև ամեն մէկն իր շահն աչքի առաջ ունի, և այդ տեսակէտից ուրիշների՝ նոյն գործով պարապողների դժբաղդութիւնը, անաջողութիւնը և վնասը ուղղակի օգուտ է իրան… Այդպէս է առևտրական աշխարհի օրէնքը. Նոյնանման առ ու ծախս ունեցողների, արդիւնաբերողների մէկի աջողութիւնը պայմանաւորվում է անպայման միւսի անաջողութիւնով, մէկի օգուտը՝ միւսի վնասով…

Մարդկային հասարակութեան այս անպատւաբեր օրէնքը այստեղ սկսեց աւելի սպառնալի կերպարանք ստանալ մէկ սնանկութիւնից յետոյ, որը բանտարկութիւն, ինքնասպանութիւն ծնելով հանդերձ—ընդհանուր պատուհաս դարձաւ բազուցիների համար: Սնանկացողը յայտնի պաշտօն, դիրք ունեցող և համակրութիւն վայելող երիտասարդ մի անձնաւորութիւն էր: Ոչ ոք երբէք մտքից անգամ չէր անցկացնի, թէ այդ հաւատ և յարգանք ներշնչող անձնաւորութիւնը ընդունակ կը լինի որ և է զեղծում գործելու, աններելի, ստոր միջոցների դիմելու: Հէնց այդ տպաւորութեան տակ էլ ամենքը հաւատացել, ամենքը յարգել, ամենքը հնար եղածին չափ աջակցել, ծառայութիւն են մատուցել: Ոչ ոք չէ մերժել նրա խնդիրը, ում խնդրել է մուրհակ տալ, տուել է՝ վստահանալով նրա ազնուութեան, թէ ժամանակին նա կազատէ մուրհակը. իսկ ինքը օգտվելով բարեկամների, ծանօթների ստորագրութիւններից, նրանց բլանկներից, մուրհակները զեղջել, փողերը ստացել է: Այդ բոլորից յետոյ նա ինչով է փոխարինում իր ծանօթների և բարեկամների սիրալիր աջակցութիւնը,—մի սոսկալի հիասթափումով…

Երբ երկար դիմադրելուց յետոյ՝ սնանկ է հրատարակում իրան, ամենքը, պարտատէրերից սկսած մինչև նրա սրտակից բարեկամները, հետաքրքրվում են իմանալ գործերի դրութիւնը՝ հաւատացած լինելով, որ այդ «ազնիւ» և «բարի» մարդու ակտիվը եթէ չը գերակշռէ, գոնէ կը հաւասարվէ պասսիվին, ուրիշ խօսքով՝ այնքան կունենայ, որ պարտքերը կը վճարէ. սակայն զուր յոյսեր… Բոլորովին անսպասելի կերպով դուրս է գալիս, որ երիտասարդ կօմերսանտը 1,050,000 ռ. պարտք ունի—իսկ միայն մի քանի հարիւր հազարի՝ գոյք, որ հաշուապահական գլխաւոր գրքերը տնից դրամենեակ բերելիս՝ մոռացել, թողել է կառքում և այլն, և այլն,—մի խօսքով մի խայտառակ բացատրութիւն, մի անսպասելի վարմունք, որի հետևանքը՝ հակառակ պարտատէրերի ցանկութեան, եղաւ խայտառակ բանտարկութիւն… Իսկ պարտքերը, մուրհակները, որոնց վրա տասնեակաւոր մարդիկ խաթեր համար բլանկներ են դրել—մնում են անխուսափելի վճարներ նրանց համար, որոնք թէև փողի երես չեն տեսել, բայց օգնելու համար բլանկներ են դրել մուրհակների վրա: Ստեղծվում է սոսկալի դրութիւն կողմնակի մարդկանց համար: Մարդիկ, որ երբէք հաշւի չեն առած, թէ վճարներ ունեն, չեն նախապատրաստված, յանկարծ, անսպասելի կերպով պարտքերի են հանդիպում. սնանկացել է մուրհակ տուողը, ուրեմն պէտք է վճարէ այդ գումարը նա, ով բլանկ է դրել, երաշխաւորվել է, հակառակ դէպքում նա ևս՝ երբ վճարել չը կարողանայ—նոյնպէս սնանկութեան է մատնվում: Եւ ինչու համար. նրա համար, որ ցանկացել է լաւութիւն անել, աջակցել «ազնիւ» ճանաչված բարեկամին: Այս տեսակէտից վնասն այն աստիճան մեծ եղաւ, որ, շնորհիւ այդ հանգամանքի, շատերը զգալի հարուածներ կրեցին և սնանկացան նոյն իսկ…

Ահա այսպիսի օրինակներ, փաստեր աչքի առաջ ունենալով՝ մարդիկ այն աստիճան զգաստացել, զգուշացել և նախապաշարվել են մէկ մէկու դէմ, որ այլ ևս չեն հաւատում ոչ ազնուութեան, ոչ անկեղծութեան և ոչ բարեկամութեան: Այդպիսի հանգամանքներն աւելի են սաստկացնում ստեղծված «դրամական տագնապը», քան թէ իսկապէս ներկայացնում է իրերի դրութիւնը…

Ն. Դաւթեան

ջրեր: Անհրաժեշտ է որոնել մաքուր աղբիւրներ, հետազօտել ջրի որակութիւնը և քանակութիւնը և ապա լուրջ կերպով խօսել նրա պիտանութեան մասին քաղաքի համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անգլիական զինւորական մինիստրութիւնը ոչինչ նոր տեղեկութիւններ չէ հրատարակում պատերազմական գործողութիւնների մասին: Լրագիրներից նոյնպէս ոչինչ չէ կարելի իմանալ, որովհետև զինւորական թղթակիցների հեռագիրները տեղ չեն հասնում: «Times» լրագիրը դառն կերպով գանգատւում է իրերի այդպիսի դրութեան վրա, որը նպատակ ունի ծածկել այն, ինչ կարելի է իմանալ անգլիական պարտութիւնների մասին, այլ և մոլորեցնել բրիտանական հասարակութիւնը աֆրիկանդէրների ապստամբութեան չափերի մասին Կապլանդիայում, որը օրից օր գնալով տարածվում է:

Կապշտադտից Լոնդոնում ստացված է մի մասնաւոր հեռագիր, որ յայտնում է թէ Կապլանդիայի անգլիական բոլոր գաղթականներին զինւորելու որոշումը մեծ յուզմունք առաջացրեց Կապլանդիայի աֆրիկանդէր ազգաբնակութեան մէջ: Այդ որոշումը շատ նշանաւոր է համարվում և կարող է շատ լուրջ հետևանքներ ունենալ:

Անգլիական զինւորական մինիստրութիւնը անհրաժեշտ համարեց հետևեալ պաշտօնական բացատրութիւնը տալ՝ լորդ Ռոբէրտսին զօրքերի գլխաւոր հրամանատար նշանակելու առիթով:

«Մի քանի շրջաններում աշխատում են այնպիսի բացատրութիւն տալ Հարաւային Աֆրիկայի զօրքերի գլխաւոր հրամանատարի պաշտօնը լորդ Ռոբէրտսին տալու գործին, որ իբր թէ դա հետևանք է Բուլլէրի կրած պարտութիւնների և մի տեսակ պախարակումն նրա գործողութիւնների: Այդպիսի բացատրութիւնը ճիշդ չէ: Նախ՝ Բուլլէր մնում է իր պաշտօնում: Երկրորդ՝ կառավարութիւնը այժմ գործադրեց այն որոշումը, որի մասին առաջուց վճիռ էր կայացրած: Երբ Նատալի զօրքերը փոքրաթիւ էին, նրանց հրամանատար էր գեներալ Սայմօնս: Երբ այդ զօրքերի թիւը մեծացաւ, նշանակվեց գեներալ լէյտենանտ Ուայտ: Իսկ երբ այդ զօրքը այժմեան թւին հասաւ, այն ժամանակ գլխաւոր հրամանատար նշանակվեց դիվիզիայի գեներալ սըր Րէդվէրս Բուլլէր: Ներկայումս անհրաժեշտութիւն յայտնվեց նոր օգնական զօրքեր ուղարկել և զէնքի կանչել աւելի էլ մեծ թւով զօրք: Շատ բնական է, որ այժմ գեներալիսիմուսի պաշտօնը Հարաւային Աֆրիկայում տրըվում է Ռոբէրտսին: Այդ նախատեսնված էր առաջուց, այն ժամանակ, երբ նշանակվեց Րէդվէրս Բուլլէր, և մի և նոյն ժամանակ պէտք է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրա, որ Բուլլէրին փոխարինում է ոչ թէ մի որ և է ուրիշ գեներալ, որ հաւասար է նրան իր դրութեամբ, այլ նրանից աստիճանով բարձր մարդ»: Զինւորական շրջաններում հաւատացնում են, որ լորդ Ռոբէրտսի առաջին գործն այն էր, որ հեռագրեց Օրանժեան հանրապետութիւնից դէպի արևելք և հարաւ գործող գեներալներին, որ նրանք անյապաղ կենտրօնացնեն իրանց ոյժերը մինչև նոր օգնական զօրքերի գալը:

Լորդ Ռոբէրտսի մասին, ի միջի այլոց, ասում են, որ նա նախ և առաջ շատ ծեր է, և երկրորդ՝ թէ նա և թէ լորդ Կիտչենէր երբէք Հարաւային Աֆրիկայում չեն եղել: Լորդ Ռոբէրտս նշանակվեց զինւորական մինիստրի պահանջով, որովհետև մինիստրը չէր ցանկանում վիրաւորել Բուլլէրի ինքնասիրութիւնը՝ մի որ և է երիտասարդ գեներալ նշանակելով նրա գլխաւոր:

«Central News» լրագրում տպված է մի թղթակցութիւն Կապշտադտից, որի մէջ թղթակիցը հաղորդում է, որ Կապլանդիայի բօէրների ատելութիւնը դէպի անգլիացիները օրից օր աճում է: Ամենալաւ շրջանին պատկանող ջահիլ աղջիկները վարդեր են ցանում աֆրիկանդէրների ոտքի տակ և բացականչում են. «Կոտորեցէք անգլիացիներին, աշխատեցէք, որ ձեզանից իւրաքանչիւրը սպանէ գոնէ 20 անգլիացի:» Պորտ-Էլիզաբեթում, աշակերտուհիներին ամեն օր կարդում են այն բանի մասին, թէ ինչպէս հակա-քրիստոնէական կերպով վարվեց Անգլիան Տրանսվաալի հետ:

«Daily News» լրագիրը, պաշտօնական փաստերի հիման վրա, հաղորդում է, որ անգլիացիների նորերս կրած պարտութիւններից յետոյ, Հարաւային Աֆրիկա հասած նոր օգնական զօրքերը կազմում են աւելի քան 6 հազար զինւորներ 250 օֆիցէրներով: Եթէ հաշւենք ճանապարհի վրա գտնվող օգնական զօրքերը, այն ժամանակ 1900 թւի յունվարի 1-ին Հարաւային Աֆրիկա կը հասնեն թւով 30,171 զինւորներ և 952 օֆիցէրներ: Նրանց հետ միասին փոխադրող նաւերը տանում են 4912 ձիեր: Վերոյիշեալ թւերի մէջ չեն մտած 6-դ դիվիզիայի մնացորդը և ամբողջ 7-դ դիվիզիան, որը միասին կը կազմեն 33 հազար մարդ: Կառավարութիւնը այս անգամ վարձել է արագընթաց նաւեր, և սրանից յետոյ այդ նաւերը Անգլիայից Հարաւային Աֆրիկա պէտք է գնան քսան օրում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից Köl. Zeit.» լրագրին հեռագրում են, որ սովը Վանի և Էրզրումի վիլայէթներում անտանելի չափեր է ընդունել: Հացի գինը այնպէս աճում է, որ Մօսուլում, օրինակ, դեռ մարտ ամսին ցորենը եօթը և ութն անգամ աւելի թանգ արժէր, քան սովորական տարիները, իսկ գարին 28 անգամ աւելի թանգ արժէր:

—Սուլթանի փեսայ Մահմուդ-փաշայի փախուստը տարաձայնութիւն առաջացրեց Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջ: Փախած Մահմուդ-փաշային բռնելու համար թիւրքաց իշխանութիւնները բռնեցին և խուզարկեցին, ի միջի այլոց, ֆրանսիական «Congo» շոգենաւը: Ֆրանսիական հաւատարմատարը, դեսպանի բացակայութեան պատճառով, եռանդով բողոքեց այդ վարմունքի դէմ:

—Թիւրքաց լրագիրների խօսքով, Բ. Դուռը ձեռք առաւ մի շարք նոր միջոցներ, որոնք շուտով կը գործադրվեն արգելված ապրանքներ Թիւրքիա ներմուծելու դէմ: Այդ կարգադրութեան համաձայն, Կ. Պօլսի ծովափին մօտեցող շոգենաւերը խիստ հսկողութեան կենթարկվեն և այն բոլոր ապրանքները, որոնցով բեռնաւորվում են այդ շոգենաւերի պահեստները, պէտք է խուզարկվեն: Բացի դրանից, որովհետև ստուգված է, որ բոլոր այդ տեսակ արգելված ապրանքները (պէտք է հասկանալ զէնքերը և պայթող նիւթերը), որոնք ընկել են ոստիկանութեան ձեռքը, ներմուծվում են Գալիպօլիից ցամաքային ճանապարհով, որոշված է հսկողութեան առանձին միջոցներ ձեռք առնել: Կ. Պօլսի թիւրքաց մամուլը իր կողմից խորհուրդ է տալիս կառավարութեանը եռանդուն միջոցներ ձեռք առնել զինավաճառութեան դէմ ամբողջ կայսրութեան մէջ, մատնացոյց անելով այն բանի վրա, որ զինավաճառութեան արգելման օրէնքը գոյութիւն ունի Թիւրքիայում: «Մենք առաջարկում ենք—ասում է թիւրքաց «Իգդամ» լրագիրը մի առաջնորդող յօդուածի մէջ,—որ կառավարութիւնը մի անգամ ընդմիշտ գնէ բոլոր զինավաճառ խանութների ապրանքները և այլ ևս երբէք թոյլտւութիւն չը տայ նորերը բանալու» Լրագրի կարծիքով, բացառութիւն կարող է կազմել որսի և զարդարանքների համար անհրաժեշտ զէնքը,—այն պայմանով, որ նա էլ կօնտրօլի ենթարկվի:

—«Րէյտէրի գործակալութեան» Կ. Պօլսի թղթակիցը հաւատացնում է, որ Բաղդադի երկաթուղու գիծը կառուցանելու արտօնութիւնը, որ տուած է գերմանական ընկերութեան, առիթ է տուել ռուսաց մի ընկերութեան դիմել Բ. Դրան և խնդրել, որ թոյլատրվի նրան երկաթուղու գիծ անցկացնել Կարսից մինչև Էրզրում: Այդ գծի նշանակութիւնը ակնյայտնի է, աւելացնում է թղթակիցը, և ռուսաց ընկերութեան այդ առաջարկութիւնը համարվում է իբրև հակակշիռ գերմանական ձեռնարկութեան: Գերմանական բանկի դիրեկտոր Սիմէնս արդէն Կ. Պօլիս է եկել Բաղդադի երկաթուղու վերաբերմամբ պայմանագիրը ստորագրելու: Թղթակիցը ասում է, որ Բ. Դուռը յոյս ունի նրանից ստանալ կանխավճար 150,000 թիւրքական լիրա, որպէս զի վճարէ պաշտօնեաների ռոճիկը մինչև Րամազանի տօնը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 դեկտեմբերի

ՊԱՐԻԶ, «Վօլֆի գործ.» Գերմանական դեսպան կոմս Մինստէր ճանապարհ ընկաւ դէպի Հաագա՝ կօնֆերենցիայի որոշումները ստորագրելու համար:

ԲԵՐԼԻՆ: «Վօլֆի գործ.» «Norddeutsche Zeitung» լրագիրը ասում է. «Ուրիշ շատ պետութիւնների պէս՝ Գերմանիան իր ժամանակին ստորագրեց Հաագայի միջազգային խաղաղութեան կօնֆերենցիայի վերջնական արձանագրութիւնը յուլիսի 29-ին, բայց կօնֆերենցիայի մշակած պայմանագրերի և դեկլարացիաների վերաբերմամբ՝ իրաւունք է պահել իրան քննել մանրամասնօրէն այդ դօկումենտները: Երբ այդ քննութիւնը կատարվեց գերմանական կենտրօնական վարչութիւնների կողմից՝ Պարիզի գերմանական դեսպան կոմս Մինստէր, Հաագայի կօնֆերենցիայի գերմանական աւագ պատուիրակը, առաջարկութիւն ստացաւ ուղևորվել Հաագա՝ ստորագրելու այնտեղ Գերմանիայի անունից, մինչև տարվայ լրանալը, երեք դաշնագրութիւնները և դեկլարացիաները. մի և նոյն ժամանակ միայն 10-դ յօդուածի մասին, որ վերաբերում է Ժընևեան պայմանագիրը գործադրելուն ծովային պատերազմում, նոյն տեսակ ծանօթութիւն կը մտցնի, որպիսին դիտաւորութիւն ունի մտցնել և Անգլիան: Դեկտեմբերի 28-ին Մինստէր կը գնայ Հաագա և կը ստորագրի դօկումենտները, ինչպէս որ ստորագրել են Աւստրո-Ունգարիան և Իտալիան: Գերմանիան դրանով տալիս է նոր ապացոյց այն հանգիստ և խելացի քաղաքականութեան, որը անդադար սերտ կապ է հաստատում մեզ դաշնակից պետութիւնների հետ և մի և նոյն ժամանակ պահպանում է մեր հարևան ռուսաց կայսրութեան հետ բարի հարևանութեան և վստահութեամբ լի յարաբերութիւններ»:

ԼՕՆԴՕՆ: «Րէյտէրի գործ.»: Կապշտադտից պաշտօնապէս հաղորդում են դեկտեմբերի 14-ից, որ իրերի դրութեան մէջ տեղի չէ ունեցել ոչ մի փոփոխութիւն: Մէտուէն հաղորդում է, որ թշնամու զօրքերի թիւը աւելացել է և գրաւված է անգլիական առաջապահ դիրքերից $3\frac{1}{2}$ մղոն հեռաւորութեան վրա խրամատներ շինելով: Գատէկր աշխատում է հաղորդակցութիւն վերականգնեցնել Ինդուէի քարածուխի հանքերի հետ:

ԳԻԲՐԱԼՏԱՐ: Երէկ երեկոյեան եկաւ «Dunaltar Castle» նաւով ֆելդմարշալ Ռոբերտսոն: Կիտչենէր նստեց այդ նաւը, որը վաղը ճանապարհ կընկնի դէպի Հարաւային Աֆրիկա:

ՊՐԷՏՕՐԻԱ, դեկտեմբերի 12-ին: «Րէյտէրի գործ.»: Ժուբէր, դեկտեմբերի 6-ին գլխաւոր բանակը գալուց յետոյ, ընդունվեց բօէրների կողմից սրտագին կերպով: Նա ճառով դիմեց նրանց:

ՋԱՎԷԼԷՑ, դեկտեմբերի 9-ին: «Րէյտ. գործ.»: Այսօր բօէրների դիրքերը ռմբակոծվում էին:

ԼՕՆԴՕՆ, դեկտեմբերի 9-ին: «Րէյտէրի գործ»: Բրիտանական մամուլը շատ բարենպաստ կերպով ընդունեց Բարձրագոյն հրովարտակը ֆինանսների մինիստր Վիտտէի անունով: «Times» լրագիրը ուրախութիւն է յայտնում այն բանի առիթով, որ Վիտտէ, որն արդիւնաբերութեան և առևտրական առաջադիմութեան ներկայացուցիչ է համարվում, ստացաւ Կայսրի բարեհաճութեան մի այդքան աչքի ընկնող ապացոյց: Հրովարտակը մի նոր ապացոյց է Ռուսաց Կայսրի և նրա ֆինանսների մինիստրի խաղաղասիրական և հաշտական սկզբունքների, առհասարակ թէ ինչու համար ոչինչ պատճառներ չը կան Ռուսաստանի և Անգլիայի միջև բարի համաձայնութիւն կայացնելու դէմ այն երկրների ապագայի վերաբերմամբ, որոնք սերտ կերպով կապված են այդ երկու պետութիւնների երկրների հետ: «Standard», «Pall-Mal Gazette», «Financiel News» և «Daily Bullioniste» լրագիրները ամենալաւ հետևանքներ են սպասում մինիստր Վիտտէի առաջարկութեան Բարձրագոյն հաստատութիւնից՝ ռուսաց օրէնսդրութեան րէֆօրմի վերաբերմամբ ռուսական բորսայի և ակցիօներական ընկերութիւնների մասին: «Standard» կարծում է, որ այդ րէֆօրմները, միացած Թագաւորի վճռական կամքի հետ՝ հետևել խաղաղութեան քաղաքականութեանը, պէտք է դրդեն բրիտանական դրամատէրերին իրանց դրամագլուխները Ռուսաստանում շահագործելու:

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ: Երէկ, երեկոյեան մօտ 7 ժամին, սպանված է կողոպտելու նպատակով տանտէր Կրասովսկայա. Նրա երկու ծառաները սաստիկ վիրաւորված են. Կրասովսկայայի մօտ ապրող տղան ազատվեց: Ուզենալով ազատել կառապանի ձեռքից, որը ուզում էր բռնել սպանողներից մէկին, մնացած երկու յանցաւորները դանակով վիրաւորեցին նրան, իսկ իրանց ընկերոջը՝ պատահմամբ ատրճանակի հարուածով: Վիրաւորվածը բռնվեց երկաթուղու կայարանում:

ՏԱՄԲՕՎ: Չը նայելով ընդհանրապէս լաւ բերքերին, նահանգի մի քանի տեղերի ազգաբնակութիւնը կարող է ուտելու հացի և գարնանացանի սերմացուի պակասութիւն զգալ: Այդ պատճառով նահանգական զեմստվօի վարչութիւնը 50,000 րուբլու կրեդիտ բաց արեց:

ՄՕՍԿՎԱ: Կոմս Տօլստոյ այսօր իրան լաւ է զգում. Նա ման եկաւ սենեակներում, բայց չէ դուրս գալիս:

16 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված է Բարձրագոյն ուկազ՝ 1900 թւին պետական գանձարանի երկու կարգի տոմսակներ հրատարակելու մասին 55,516,000 րուբլի գումարի:

ՕԴԷՍԱ: «Արևելեան ընկերութիւն» անունով այստեղ հիմնված նոր ընկերութեան «Լիլիա» շոգենաւը, որը հացահատիկի բեռով Օդէսայից Համբուրգ էր գնում, Մարմարի ծովում եղած փոթորիկի ժամանակ ծանծաղուտի մէջ խրվեց Գալիպօլիի մօտ: Սառուցով ծածկված է ամբողջ տեսանելի տարածութիւնը մինչ 15 մղոն: Ափերի մօտով նաւերի երթևեկութիւնը դադարած է: Նաւագնացութիւնը դադարած կարելի է համարել:

ՕԴԷՍԱ: Քաղաքային կրեդիտային ընկերութեան մէջ 125 տներից, որոնք ծախու էին նշանակված այսօր, աճուրդները մտցնելուց յետոյ, ընդամենը միայն հինգ տներ ծախվեցին:

Քաղաքային պսիխիատրիական հիւանդանոցի կառավարիչ նշանակված է Խարկովի համալսարանի պրօֆէսօր—պսիխիատր Օրշանսկի:

ՍՏԷՐԿՍՏՐՕՄ: «Րէյտէրի գործ.»: Լուրեր են պտտում, որ հինգշաբթի, հետախուզութեան ժամանակ, բրաբանտեան հեծելազօրքի և կապլանդեան ոստիկանութեան հեծեալ հրացանաձիգների մի բաժինը, գնդապետ Մօնմօրանսիի հրամանատարութեամբ, սաստիկ ջարդ տուեց 180 մարդուց բաղկացած ապստամբների զօրախմբին դէպի Ինդվէ տանող երկաթուղիական ճիւղի վրա: Ապստամբները փախան, թողնելով բանակը՝ պաշարով և զէնքերով: Անգլիացիներից ոչ ոք վիրաւորված չէ:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: «Րէյտ. գործ.»: Ինչպէս հեռագրում են Նոր-Օրլէանից, այնտեղի բրիտանական հիւպատոսն ասում է, թէ բօէրների գործակալները այնտեղ սիմինդրի և հացի մեծ պաշարներ են գնում և բեռնում նրան Րոտտէրդամ ուղարկելու համար:

ՎԻԷՆՆԱ: Նախկին մինիստր-նախագահ Կլարի Շտիրիայի փոխարքայ է նշանակված:

ՊԱՐԻԶ: Բարձրագոյն դատարան: Պրօկուրօրը պահանջում է դատապարտել Դէրէնին և Լիւրսալիւսին և արդարացնել այն վեց մեղադրվողներին, որոնց ինքն հրաժարվեց մեղադրելուց: Դատարանը արդարացնում է նրանց և հրամայում է ազատ արձակել արդարացրվածներին: Հետևեալ նիստը կը լինի վաղը:

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, Այստեղ անտրացիտի մեծ կարիք կայ. ծախու չը կայ:

ԿԻԵՎ: Հաշտարար դատարանում քննվում էր այն 193 անձանց գործը, որոնց ոստիկանութիւնը մեղադրում է այն բանում, որ նրանք մասնակցել են աղօթաժողովներում նկարիչ Բաեվսկու բնակարանում: Կարծում են, որ դատի ենթարկվածները շտունդիստների աղանդին են պատկանում: Մեղադրվողները չեկան դատարան: Դատավճիռ կայացաւ, որով ժողովի իւրաքանչիւր մասնակցողը դատապարտվեց 25-ից մինչև 30 րուբլի տուգանքի կամ 7-ից մինչև 14 օրվայ բանտարկութեան: Բաեվսկի դատապարտվեց 50 ր. տուգանքի կամ մէկ և կէս ամսվայ բանտարկութեան:

ԲԵՐԼԻՆ: «Neues Viener Tageblatt» լրագրում տպված է, որ Բիսմարկի երկու որդիքը ընդդիմացան իրանց հօր «Մտքեր և Յիշողութիւններ» գրուածքի երրորդ հատորի լոյս տեսնելուն: Բանն այն է, որ այդ երրորդ հատորի մէջ խօսվում է հին կայսերական կանցլէրի արձակման մասին, նոյնպէս և կայսրի հետ նրա ընդհարման պատճառների մասին: Բիսմարկի որդիքը, երևում է, ցանկանում են արգելք դառնալ այդ բոլորի հրատարակման: Կոտտի հրատարակչական ֆիրման, որը Բիսմարկից ձեռք է բերել նրա գրուածքների հրատարակութեան իրաւունքը, երրորդ հատորի դէմ ուղղած արգելքի պատճառով, նիւթական վնասներ է կրում, և այդ պատճառով երևի դատ կը սկսի Բիսմարկի որդկերանց դէմ:

ԲԵՐԼԻՆ: «Local Anzeiger» լրագիրը, «Պորտուգալիական կօլօնիաների բաժանումն» վերնագրով յօդուածում տպում է տեղեկութիւններ գերմանօ-անգլիական գաղտնի դաշնագրի կարծեցեալ բովանդակութեան մասին: Հեղինակաւոր աղբիւրից «Վօլֆի գործակալութեանը» հաղորդում են, որ այդ տեղեկութիւնները սխալ են:

ԲԵՐԼԻՆ: «Local Anzeiger» լրագրում տպված են տեղեկութիւններ գերմանօ-անգլիական գաղտնի դաշնագրի մասին, որ վերաբերում է պորտուգալիական կօլօնիաներին: Այդ դաշնագրով պորտուգալիական երկիրները Աֆրիկայում, բացի Զամբէզիից դէպի հիւսիս գտնվող երկիրը, անցնում են Անգլիային, իսկ ասիական կալուածքները և Զամբէզիից դէպի հիւսիս գտնվող երկիրը զիջանվում են Գերմանիային, այնպէս որ վերջինը կը վճարէ 25,000,000 մարկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԱՍՏՐԱԽԱՆ. Հ. Բ. Ձեր առաջարկած պայմանով կարող էք ստանալ «Մշակ»:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. ԳՐՕՑԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՑԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2 ժ. ներքին հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. ԳՐՕՑԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. ներարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն մէզի, խխի և արեան:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
65—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷԴԷՎԱՆՕՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից:

Առաւօտները՝

Վ. Ի. ՃԻՃԻՆԱՁԷ—ատամների հիւան. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Դ. Կ. ԷՐԻՍԹՕՎ—վիրաբուժութեան. 10—12 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օր. 10½—12 ժ.
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ. 12—1 ժ.
Ն. Զ. ՈՒՄԻԿՕՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12½—1½ ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—վեներական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—ներարդային և ելեկտրօթէրապիա, 1—2 ժ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԷՎ—ականջի, կոկորդի, քթի հ. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ օր. 2—3 ժ.

Երեկոները՝

Դ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.
Ս. Ի. ՎԱՑԱՁԷ—ներքին հ. և մասսաժ, 6—7 ժ.

Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար:

Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով:

Նիկօլաեվսկայա փողոց, Վօրօնցովի արձանի հանդէպ, տ. Սագինովի, № 11.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
15—20 Միխայիլ Գէդէվանօվ

Երկու թիւրքիայիներ, որոնք երկար տարիներ պարապել են պարտիզպանութեամբ և ծաղկապահութեամբ և լաւ գիտեն իրանց արհեստը, ցանկանում են պաշտօն ստանալ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 3—3

Լոյս տեսան
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ

1900 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ցանկացողները թող շտապեն՝ որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել: Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Չմշկեան: (ե. չ.) 16—20

Յայտնում եմ ի գիտութիւն պ. պ. թարգմանիչների, որ արդէն պատրաստ են հետեւեալ պիէսների թարգմանութիւնները. «Գ. Կառավարիչը» (Г. Директоръ) կօմէդիա 3 արար., «Սիրահարվածը» (Влюбленная) դրամա 4 արար., «Նոր ընտանիքում» (Въ новой семьѣ) դրամա 4 արար., «Կանացի հետաքրքրութիւն» (Женское любопытство) կատակերգ. 2 արար., «Սեվիլիոյ աստղը» (Звѣзда Севильи) դրամա 5 արար., «Ամուրիներ» (Наѣздница) կատակերգ. 1 արար. և «Սիրոյ միջնորդները» կամ «Կուռնելիոս աղբար» փոխադրութիւնը՝ Ց. Պարոնեանի համանուն գրուածքից:

2—2 Ա. Վրոյր

Թիֆլիսի տոհմական պատուաւոր քաղաքացի Ալէքսանդր Յովհաննիսեան Մանթաշեան, քաղաքում նաւթի և փայտի թանգանալու պատճառով, յանձնել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան հինգ վագօն ցիստերն նաւթ, մինչև 3500 պուդ ծանրութեամբ, քաղաքի ամենաաղքատ բնակիչների վրա ծախելու պուդը մի րուբլիով, այն պայմանով, որ դրանից գոյացած գումարով առնվի փայտ և ածուխ աղքատներին ձրի բաժանելու համար: Ի նկատի ունենալով այդ՝ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն Թիֆլիսի ազգաբնակութեան, որ վարչութիւնը դեկտեմբերի 17-ից սկսած՝ քաղաքի չքաւոր ազգաբնակութեան վրա կէրօսին ծախելու է քաղաքի հետեւեալ 11 կէտերում.

1) Նաւթլուղում, Բէյութէօվսկայա փողոցի վրա, ջրանցքի բուտկայում:
2) Կախէթինսկայա հրապարակի վրա, Առևտրական ոստիկանութեան բուտկայում:
3) Զուգուրէթում, ռուսաց Նիկօլաեվսկայա եկեղեցու մօտ, ջրանցքի բուտկայում:
4) Աւճալեան հրապարակի վրա (Մօլօկանսկայա) ջրանցքի բուտկայում:
5) Նախալօվկայում, ջրանցքի բուտկայում:
6) Դիդուբէյում, 2-րդ գիշերային ապաստարանում:
7) Օլգինսկայա և Ցինեոտսկայա փողոցների անկիւնում, ջրանցքի բուտկայում:
8) Մթածմինդայում (Դավիդօվսկայա հրապարակ) ջրանցքի բուտկայում:
9) Մուխրանսկայա փողոցի վրա, ջրանցքի բուտկայում:
10) Մէյդանում, քաղաքային կշեռքի մօտ:
11) Վօրօնցօվսկայա փողոցի վրա՝ Զիթախօվի գործարանի դիմաց, առաջին գիշերային ապաստարանում:

Նաւթը կը ծախվի ֆունտը 2½ կօպէկով:—Ամեն մէկը կարող է ստանալ միայն 4 ֆունտ: Կը սկսվի ծախել առաւօտեան 12 ժամից և կը շարունակվի մինչև երեկոյեան ժամի 5-ը: Ձրի փայտ բաժանելու մասին կը յայտարարվի առանձին: 1—3

Լ Է Օ

ԳԼԱԴՍՏՕՆ

ԳԻՆՆ Է 80 ԿՕՊԷԿ

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. Գրասենեակում վաճառվում են ընկերութեան և այլ գրքեր: Ցանկացողներին գրացուցակ ուղարկվում է: 7—10

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բկի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար իր նոր բնակարանում: Սօլօլակ, Սերգիեվսկի փող., տ. Տօվիանովի: 7—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՋՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագւում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով: 26—100

ՄԻ ՀՄՈՒՏ ՀԱՇՒԱՊԱՀ

օժտված բազմամեայ փորձառութեամբ, ցանկանում է պաշտօն ստանալ. Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը: (ե. չ.) 3—3

Գրասենեակ „Ա. Փրիդոնեան եւ Ընկ.“

Ապահովացնում է ներքին փոխառութեան վիճակախաղի տոմսերը ցնոր փոփոխութիւն:

1 ր. 85 կօպ. ամեն մէկ տոմսի համար I փոխառութեան, յունվարի 2-ի տիրաժից 1900 թ.
1 ր. 35 » » » » II » մարտի 1-ից » 1900 թ.
1 ր. 10 » » » » III » մայիսի 1-ից » 1900 թ.

Բացի 15 կօպ. մարկայից ամեն մէկ անդորրագրի համար: Գրասենեակը հեռագրով և վերադիր վճարով չէ ապահովացնում: (ո. ե.) 1—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթեւեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ: Պատրաստում է գիմնազիաների, կադետների կորպուսի, զեմլեմէրների, րէալական, առևտրական և այլ ուսումնարանների համար:

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն աւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ: Կիֆեր, Լիվիցկի, Կօլէնկօ, Պեառեցկի և այլն: Աւանդելի առարկաներն են—կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն (ռուսաց և ընդհանուր), պատմութիւն, բնական գիտութիւն, նկարչութիւն, գրչութիւն, երգեցողութիւն, պար, երաժշտութիւն: Պար ուսուցանում է բալետմէյստեր Ինինչենցի:

Հասցէն. *ТИФЛИСЪ, Гановская ул., № 11.* 3-րդ գիմնազիայի մօտ: 8—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, համերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1900 թ-ի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ է 3 ր. 50 կօպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: 1—20

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մեդալների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալօվի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից:

Ուսուցիչներին, ուսանողներին և տնտեսական ընկ. անդամներին կը լինի զիջում: Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս:

Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել: 22—50

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ինժեներ Ն. Բ. Պասեկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. *Тифлисъ—Пасеку.*
ՏԵԼԷՖՕՆ № 642.



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների:

ԲԻՒՐՕՆ ՅԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶԱ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա:



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տուրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ:

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ:

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(ե. հ. չ.) 50—100

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Декабря 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул. № 27.